

***Արթուր Բաղդասարյանի նախընտրական գրասենյակի հայտարարության՝
Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական
հանձնաժողովին առնչվող մասի կապակցությամբ***

Գրասենյակը ս/թ փետրվարի 25-ին տարածել է հայտարարություն այն մասին, որ իբր թե կենտրոնական ընտրական հանձնաժողովի փետրվարի 24-ի արտահերթ նիստը հրավիրվել է սահմանված կարգի խախտմամբ: Եթե հայտարարություն տարածած գրասենյակում կամ կենտրոնական ընտրական հանձնաժողովում ՕԵԿ անդամը ծանոթ լինեին ՀՀ ընտրական օրենսգրքին և կենտրոնական ընտրական հանձնաժողովի կանոնակարգին, ապա, հնարավոր է, որ հայտարարությունն իր մեջ իրականությանը չհամապատասխանող տեղեկատվություն չպարունակեր:

Քանի որ հայտարարությունն արդեն իսկ հրապարակվել է, ստիպված են պարզաբանել ՀՀ օրենսդրության մի քանի դրույթներ, որոնք վերաբերում են նաև կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամի՝ օրենքով վերապահված պարտականությունների կատարմանը:

ՀՀ ընտրական օրենսգրքի 40²-րդ հոդվածի 12-րդ կետի համաձայն քվեարկության արդյունքների վերահաշվարկի աշխատանքներն ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներում դադարեցվում են քվեարկության օրվանից հինգ օր հետո՝ ժամը 14.00-ին, այսինքն՝ ս/թ փետրվարի 24-ին՝ ժամը 14.00-ին:

Այս ընթացքում կենտրոնական ընտրական հանձնաժողովը զբաղված է լինում ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներից պարբերաբար ստացվող՝ տեղամասերում քվեարկության արդյունքների, այդ թվում վերահաշվարկի արդյունքների ամփոփմամբ (տես նաև Հանրապետության Նախագահի 2008թ. փետրվարի 19-ի ընտրությունների նախապատրաստման և անցկացման հիմնական միջոցառումների ժամանակացույցի (այսուհետ՝ ժամանակացույց) 49 և 50 կետերը):

ՀՀ ընտրական օրենսգրքի 63²-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն կենտրոնական ընտրական հանձնաժողովը, հիմք ընդունելով ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներից ստացված՝ ընտրական տեղամասերում քվեարկությունների արդյունքների վերաբերյալ արձանագրությունները, դատարանների վճիռներն ու ընտրատարածքներում կատարված վերահաշվարկների արդյունքները, ամփոփում է համապետական ընտրությունների արդյունքները և արձանագրությամբ վավերացնում դրանք քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 7 օր հետո, այսինքն՝ յոթօրյա ժամկետում:

Ստանալով բոլոր 1923 ընտրական տեղամասերի արձանագրությունները (ներառյալ վերահաշվարկ իրականացված տեղամասերինը), ավարտելով փետրվարի 19-ից 24-ը ստացված դիմում-բողոքների ուսումնասիրությունը, ունենալով ՀՀ վարչական դատարանի նախագահի գրությունն այն մասին, որ ՀՀ վարչական դատարանում առկա չէ քննության մեջ գտնվող ընտրական իրավունքին վերաբերող որևէ գործ՝ ս/թ փետրվարի 24-ին կենտրոնական ընտրական հանձնաժողովը հրավիրել է արտահերթ նիստ՝ կենտրոնական ընտրական հանձնաժողովի

կանոնակարգի պահանջների պահպանմամբ: Նիստը հրավիրվել է կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից, նիստի ժամի և օրակարգի մասին հանձնաժողովի՝ կենտրոնական ընտրական հանձնաժողովի վարչական շենքում գտնվող և իրենց պարտականությունները կատարող անդամները (այն է՝ իրականացնել ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված գործառույթները՝ հաշվի առնելով կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից սահմանված ժամանակացույցի «Ծանոթություն» մասը, ըստ որի ընտրական հանձնաժողովների աշխատաժամերն են 9.00-ից մինչև 18.00, հանգստյան օրերը՝ շաբաթ և կիրակի, եթե ՀՀ ընտրական օրենսգրքով և ժամանակացույցով այլ բան նախատեսված չէ), ոչ միայն առնվազն 2 ժամ առաջ տեղեկացվել են այդ մասին, այլև մասնակցել օրակարգի կազմմանը, իսկ կենտրոնական ընտրական հանձնաժողովում հիմանկանում վստահված անձի կարգավիճակով հանդես եկողները նիստի անցկացման մասին իրազեկվել են հեռախոսակապի միջոցով: Արատահերթ նիստ գումարելու մասին հայտարարությունը տեղադրված է եղել կենտրոնական ընտրական հանձնաժողովի ուտկայքում, տեղեկացվել են ՁԼՄ-ները, իսկ տարբեր գրասենյակներին նիստի հրավիրման մասին տեղեկություններ տրամադրելը կենտրոնական ընտրական հանձնաժողովի պարտականությունների մեջ չի մտնում, այդուհանդերձ, նիստի մասին իրազեկված են եղել նաև Նախագահի թեկնածուների գրասենյակները:

Տեղեկացնեմ հանձնաժողովի՝ իրենց պարտականությունների կատարումն այլ կերպ ընկալող անդամներին և նրանց նշանակած մարմինների ղեկավարներին, որ ընտրական հանձնաժողովի անդամը պարտավոր է մասնակցել հանձնաժողովի աշխատանքներին և կատարել օրենքով իր վրա դրված պարտականությունները: Պարտականությունների անհարգելի չկատարումը հանգեցնում է օրենքով սահմանված պատասխանատվության: Ս/թ փետրվարի 20-ից սկսած կենտրոնական ընտրական հանձնաժողովի երկու անդամներ իրենց աշխատավայրում են գտնվել միայն փետրվարի 24-ին՝ չբարեհաճելով մասնակցել կենտրոնական ընտրական հանձնաժողովի աշխատանքներին:

*Հայաստանի Հանրապետության
կենտրոնական ընտրական հանձնաժողովի
նախագահ Գ. Ազարյան*